

Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Կրթության և մասնագիտական մանկավարժության (ԿՄՄ) ֆակուլտետ

Կրթության կառավարման և պլանավորման ամբիոն

ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ

սովորող ուսանողների համար

(Առկա ուսուցում)

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ..... 3

ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐԵՐ..... 8

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ 8

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ.....20

ԿԱՍԸՆՏՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ.....37

ԿՐԹԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Հի	Մասնագիտության կրթական ծրագրի անվանումը	«Կրթական գիտություններ» «Կրթության գնահատում և թեստավորում» մասնագիտացմամբ
1.	Ծրագրի հակիրճ նկարագրությունը	<p>«Կրթական գիտություններ» մասնագիտությամբ մագիստրոսական կրթական ծրագիրը (մասնագիտացումը՝ «Կրթության գնահատում և թեստավորում») Հայաստանի Հանրապետությունում կրթության գնահատման մասնագետների պատրաստման առաջին ծրագիրն է: Կրթական ծրագիրն առաջինն է նաև իր ուսուցման ձևով և տևողությամբ. իրականացվում է միայն առկա ուսուցմամբ և տևում է 1.5 ակադեմիական տարի: «Կրթական գիտություններ» մասնագիտությամբ մագիստրոսական կրթական ծրագրի նպատակն է ձևավորել ուսանողների մասնագիտական գիտելիքները, հմտություններն ու կարողությունները կրթության գնահատման և թեստերի մշակման ոլորտներում: «Կրթական գիտություններ» մասնագիտությամբ մագիստրոսական կրթական ծրագիրը նախատեսված է մագիստրատուրայի ուսանողների համար, ովքեր ցանկանում են խոր գիտելիքներ, հմտություններ և կարողություններ ձեռք բերել և հիմնադր հատկապես այնպիսի գիտակարգերում, ինչպիսիք են՝</p> <ul style="list-style-type: none"> - կրթության գնահատում, - կրթության չափում, - թեստերի մշակում/ձևավորում, - կրթության քաղաքականության մշակում ու վերլուծություն, - կրթության կառավարում և հարակից այլ գիտակարգեր: <p>«Կրթական գիտություններ» ծրագրի շրջանակներում փոխկապակցվում են տեսական և գործնական բաղադրիչները՝ մասնագիտական ոլորտում շրջանավարտների գործունեություն ծավալելու պատրաստվածությունն ապահովելու նպատակով: Ծրագրի բոլոր դասընթացները ներառում են գործնական բաղադրիչ՝ հնարավորություն ընձեռելով ուսանողներին տեսությունը կիրառելու մասնագիտական իրական կյանքի տարբեր իրավիճակներում:</p>
2.	ՈԱՇ մակարդակ/ Աստիճան	ՈԱՇ մակարդակ 7/մագիստրոսի աստիճան
3.	Տևողությունը	Առկա ուսուցում՝ 1.5 տարի
4.	Ծանրաբեռնվածությունը (ECTS կրեդիտներ)	90 ECTS կրեդիտ
5.	Դասավանդման լեզուն (ներք)	Հայերեն
6.	Ակադեմիական տարվա սկիզբ	Սեպտեմբերի երկրորդ շաբաթը
7.	Ուսուցման ձևը	Առկա

8.	Ընդունելության պայմաններ	Հարցագրույց
9.	Ավարտական պահանջները	Մագիստրոսական թեզի պաշտպանություն
10.	Ուսումնառության վերջնարդյունքները (գիտելիք, կարողություններ, հմտություններ)	<p>Գիտելիք և իմացություն</p> <ul style="list-style-type: none"> • իմանա կրթության կառավարման ոլորտների հիմնախնդիրները, կազմակերպական և կառավարման տեսությունները, ինչպես նաև դրանց ծագումնաբանությունն ու զարգացումը, • բացատրել ազգային և միջազգային կրթական համակարգերի շրջափուլերը, ինչպես նաև կրթության ոլորտի մարտահրավերներն ու հետագա զարգացման միտումները, • ներկայացնել կրթության գնահատման ոլորտների հիմնախնդիրները, • մեկնաբանել կրթության չափման տեսությունները, • իմանա կրթության բովանդակությունը, • մեկնաբանել կրթության չափումը և հոգեչափությունը, • իմանա դպրոցի կառավարումը, • սահմանել կրթության որակի մշակույթի ձևավորման նախադրյալները, որակի ապահովման հիմնական հասկացությունները, ինչպես նաև կրթության զանգվածայնացման պատճառները ու հետևանքները, կրթության ոլորտում հետազոտության մեթոդները, • բացատրել կրթության ոլորտում տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների հիմնադրույթները, համակարգերի կառավարման համար անհրաժեշտ տեղեկատվությունը: <p>Հմտություններ <i>Տիրապետի</i></p> <ul style="list-style-type: none"> • տեղեկատվության հայթայթման ու տվյալների վերլուծության հմտություններին, • գիտական և ուսումնամեթոդական գրականության վերլուծության և հավաստի տեղեկատվական աղբյուրներից օգտվելու մեթոդներին, հետազոտական աշխատանքում հղումներ կատարելուն և գրականության ցանկի կազմմանը տարբեր ծրագրաշարերի օգնությամբ, • կրթության, ռազմավարական և մարդկային ռեսուրսների կառավարման ոլորտներում կառավարչական հմտություններին, բարձրագույն կրթության մշակութային և սոցիալ-տնտեսական դերի քննադատական վերլուծությանը: <p>Ընդհանրական հմտություններ:</p> <ul style="list-style-type: none"> • Վերոնշյալ բաղադրիչներից յուրաքանչյուրը միաժամանակ միտված է նաև ընդհանրական հետևյալ կոմպետենցիաների զարգացմանը՝ անհատական և թիմային աշխատանքի հմտություններ, բանավիճելու և սեփական կարծիքը լսարանին ներկայացնելու ու հիմնավորելու հմտություններ, • մասնագիտական հարցերում որոշումներ ընդունելու և

		<p>խնդիրներ լուծելու կարողություններ,</p> <ul style="list-style-type: none"> • տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների կիրառման հմտություններ, • օտար լեզվով (անգլերեն և/կամ ռուսերեն մասնագիտական թեմայի վերաբերյալ հստակ կառուցվածք ունեցող տեքստ կազմելու հմտություններ: <p>Կարողություններ <i>Կարողանա</i></p> <ul style="list-style-type: none"> • կիրառել և զարգացնել կրթության կառավարման գիտակարգում ձեռք բերած մասնագիտական գիտելիքները և հմտությունները՝ մասնագիտական խնդիրներին լուծում տալու համար, • մշակել և կազմել թեստեր, չափել կիրառելով հոգեչափական գործիքները, անցկացնել հարցումներ կրթության բնագավառում որակի ապահովման համակարգերի և մասնագիտական մի շարք այլ հարցերի վերաբերյալ, • կիրառել կրթության կառավարման և բարձրագույն կրթության ոլորտներում ռազմավարական պլանավորման և քաղաքականության մշակման հմտություններ, • ընդլայնել փորձը հետազոտական բնագավառում՝ ձեռք բերելով գիտելիքներ տարբեր գիտահետազոտական մեթոդների կիրառմամբ և հետազոտության հիմնական արդյունքների մեկնաբանմամբ, բացահայտել և վերլուծել կրթության կառավարման ոլորտների խնդրահարույց բաղադրիչները:
11.	Հետազոտումնառության հնարավորությունները	ՈԱՇ մակարդակ 8՝ հետազոտող (ասպիրանտ, հայցորդ)
12.	Աշխատանքի հնարավորությունները	<p>«Կրթական գիտություններ» ծրագրի շրջանավարտները կարող են իրենց հետազոտական մասնագիտական գործունեությունը ծավալել որպես բուհերի և դպրոցների ղեկավարներ, փորձագետներ կամ վերլուծաբաններ, թեստաբաններ, կրթության հետազոտողներ այնպիսի ոլորտներում և հաստատություններում:</p> <ul style="list-style-type: none"> - ՀՀ կառավարություն և նախարարություններ, - Գնահատման և թեստավորման կենտրոն (ԳԹԿ), - Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն (ԿՏԱԿ), - հասարակական կազմակերպություններ, - հիմնադրամներ, - բուհեր, - դպրոցներ, - ՀՀ ազգային ժողովի գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողով:
13.	Ուսման վարձը	Մագիստրատուրա՝ 500.000 AMD (առկա ուսուցում)

Մասնագիտություն՝

011101.00.7 Կրթական գիտություններ

011102.03.7 Կրթության գնահատում և թեստավորում

Որակավորում՝

ԿՐԹԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱԳԻՍՏՐՈՍ

«Հաստատում եմ»

ՈՒՍՄԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 1.5 տարի

Ռեկտոր՝

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԸ՝ ԱՌԿԱ

Կ. Հարությունյան

« _ _ » _____ 2021 թ.

Կիսամյակներ		
1	2	3

Թվա նիշ	Դասընթացի անվանումը և ուսանողի ուսումնական աշխատանքի տեսակները	Կրեդիտ	Կիսամյակ(ներ)	Ընդամենը, ժամ	դասախոսություն, ժամ	գործն. /սեմինար, ժամ	ինքնուրույն, ժամ	16+4	16+4	16+4
							90	30	30	30
1	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ	28		840	306	158	376	18	8	
1	Կառավարում	4	1	120	42	22	56	4		
2	Կրթության քաղաքականություն	4	1	120	42	22	56	4		
3	Կրթության գնահատում	4	1	120	42	22	56	4		
4	Կրթության կառավարում	5	1	150	42	22	86	4		
5	Հետազոտության մեթոդները կրթության ոլորտում	4	2	120	42	22	56		4	
6	Թեստի դասական և ժամանակակից տեսություններ	3	2	90	32	16	42		2	
7	Մասնագիտական օտար լեզու*	2	1	60	32	16	12	2		
8	Մասնագիտական օտար լեզու*	2	2	60	32	16	12		2	
2	ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ	37		1110	390	202	518	8	16	8
9	Կրթության բովանդակություն	4	1	120	42	22	56	4		

10	Կրթության չափում և հոգեչափություն	4	1	120	42	22	56	4		
11	Համեմատական կրթություն (ըստ կրթական տարածքների)	4	2	120	42	22	56		2	
12	Ազգային և միջազգային կրթական հետազոտություններ*	3	2	90	32	16	42		2	
13	Դպրոցի կառավարում*	3	2	90	32	16	42		2	
14	Ռազմավարական կառավարում	4	2	120	42	22	56		4	
15	Կրթության որակի կառավարում*	4	2	120	42	22	56		4	
16	Կրթության կառավարման տեղեկատվական համակարգեր*	3	2	90	32	16	42		2	
17	Գիտական շարադրանքի մեթոդներ*	4	3	120	42	22	56			4
18	Ինստիտուցիոնալ/ ծրագրային գնահատում	4	3	150	42	22	56			4
3	ԿԱՍԸՆՏՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ	3		90	32	16	42	2	0	0
19	Մանկավարժության հիմունքներ*	3	1	90	32	16	42	2		
4	ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ	22		660	64	32	564	0	0	6
20	Հետազոտական աշխատանքի կատարում (մագիստրոսական թեզի նախապատրաստում)*	3	3	90	32	16	42			2
21	Գիտական սեմինար*	3	3	90	32	16	42			4
22	Մասնագիտական պրակտիկա	4	3	120	0	0	120			
23	Մագիստրոսական թեզի պաշտպանություն (ամփոփիչ ատեստավորում)	12	3	360	0	0	360			
		90		2700	792	408	1500	28	24	14

ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ՝ ՆԿԱՐԱԳՐԵՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ

Դասընթացի անվանում	Կառավարում
Դասընթացի տեսակ	Պարտադիր
Կրթական մակարդակ	Մագիստրատուրա
Ուսուցման ձև	Առկա
Ֆակուլտետ	Կրթության և մասնագիտական մանկավարժության/ ԿՄՄ
Կուրս	1-ին
Կիսամյակ	1-ին
Մասնագիտություն	Կրթական գիտություններ
Մասնագիտացում	Կրթության գնահատում և թեստավորում
Ամբիոն կամ դասընթացը վարող ստորաբաժանում	Կրթության կառավարման և պլանավորման ամբիոն

Կրեդիտ	4		
Գնահատման բաղադրիչներ	Բաղադրիչ	%	Բաղադրիչի անվանումը
	Բ1	15	Ներկայություն և մասնակցություն
	Բ2	25	Միջանկյալ գրավոր գնահատում
	Բ3	35	Ամփոփիչ գնահատում (խմբային աշխատանքների ներկայացում)
	Բ4	25	Անհատական աշխատանքի ներկայացում (պաշտպանությամբ)

- 1. ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐ. դասընթացի արդյունավետությունն ապահովելու համար անհրաժեշտ է ապահովել հետևյալ պարտադիր բաղադրիչները՝**
- Անգլերենի և/կամ ռուսերենի պարտադիր իմացություն (առնվազն B2 մակարդակով՝ ըստ Լեզուների իմացության համաեվրոպական համակարգի (CEFR)), քանի որ առկա մասնագիտական գրականությունը և ժամանակակից գիտահետազոտական հրատարակված աշխատանքները հիմնականում հասանելի են այս լեզուներով: Ուսանողը պետք է կարողանա ինքնուրույն աշխատելու և սովորելու հմտություններ ու կարողություններ ցուցաբերել:
- 2. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐԸ**
- «Կառավարում» դասընթացը հիմնվում է կառավարման տեսությունների, հասկացությունների ու գործընթացների վերաբերյալ հակիրճ ակնարկի վրա և միտված է կառավարչական հմտությունների զարգացմանը: Կառավարումը մարդկանց կենսագործունեության կարևորագույն բաղադրիչներից է: Կառավարչի գործունեության զարգացումն ապահովելու նպատակով անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր կառավարիչ տիրապետի կառավարչական գիտելիքների և հմտությունների: Դասընթացի նպատակներից է փոխանցել ուսանողներին մասնագիտական գիտելիքներ, զարգացնել մասնագիտական հմտություններ և ներկայացնել կառավարման զարգացման համատեքստն ու գլոբալ զարգացումները: Դասընթացի ժամանակ նաև քննարկվելու

¹ Դասընթացների նկարագրերի ընդայնված տարբերակը հասանելի է ԲՊՀ Կրթության կառավարման և պլանավորման ամբիոնում:

են կառավարման գործառույթները, որոնք հնարավորություն կտան ապագա կառավարիչներին հասկանալու, իրատեսական որոշումներ կայացնելու, գնահատելու այդ որոշումների արդյունավետությունը և վերահսկելու գործողությունները: Դասընթացի առանցքային խնդիրն է ոչ միայն ուսանողներին ներկայացնել կառավարման ոլորտի հիմնարար հասկացություններն ու մոտեցումները, այլև հնարավորություն տալ նրանց ուսումնասիրելու և վերհանելու նորարարական գաղափարներ ու լուծումներ: Այս դասընթացը ներկայացնում է տարբեր կառավարման տեսության ժանրեր և ոճեր՝ շեշտադրելով տեսական և գործնական բաղադրիչների յուրացումը:

Կառավարում» դասընթացի նպատակներն են՝

- ✓ տրամադրել կառավարման ոլորտի առանցքային գիտելիքները՝ ապահովելով հետևյալ վերջնարդյունքները՝
 - փոխանցել ուսանողներին կառավարման տեսության հիմնադրույթների
 - ցուցաբերել կառավարման ոլորտի տեսությունների, գործառույթների
 - վերլուծել կառավարման ոճերը՝ կառավարչական բարդ որոշումներ կայացնելու նպատակով,
 - տիրապետել կառավարման ընդհանրական գործիքներին
 - կիրառել ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ և դրանք ծառայեցնել կառավարչական որոշումների կայացմանը:
- ✓ զարգացնել առաջնորդման, մոտիվացման, հաղորդակցման, ժամանակի կառավարման և թիմային աշխատանքի հմտությունները՝ ապահովելով հետևյալ վերջնարդյունքները՝
 - կիրառել առաջնորդման և կառավարչական հմտությունները՝ դրանք գործադրելով թիմային արդյունավետ աշխատանքներ իրականացնելու համար,
- ✓ զարգացնել ստեղծագործական և քննադատական մտածողությունը կառավարման ոլորտի շրջանակում՝ ապահովելով հետևյալ վերջնարդյունքները՝
 - ուսումնասիրել և քննադատորեն վերլուծել կառավարչական խնդիրների լուծման համար անհրաժեշտ տեղեկություններն ու տվյալները,
 - կիրառել կառավարման ոլորտի միջգիտակարգային առանցքային գիտելիքները կառավարչական տարբեր իրավիճակներում,
 - կիրառել կառավարչական և հետազոտական հմտություններն ու կարողությունները տեղական/ազգային և միջազգային սոցիալ-տնտեսական համատեքստերում:

Դասընթացի անվանում	Կրթության քաղաքականություն
Դասընթացի տեսակ	Պարտադիր
Կրթական մակարդակ	Մագիստրատուրա
Ուսուցման ձև	Առկա
Ֆակուլտետ	Կրթության և մասնագիտական մանկավարժության/ԿՄՄ
Կուրս	1-ին
Կիսամյակ	1-ին
Մասնագիտություն	Կրթական գիտություններ
Մասնագիտացում	Կրթության գնահատում և թեստավորում
Ամբիոն կամ դասընթացը վարող ստորաբաժանում	Կրթության կառավարման և պլանավորման ամբիոն

Կրեդիտ	4		
Գնահատման բաղադրիչներ	Բաղադրիչ	%	Բաղադրիչի անվանումը
	Բ1	10	Ներկայություն և մասնակցություն
	Բ2	25	Դասընթացի առաջին փուլի գնահատում (Գործնական առաջադրանքի կատարում և բանավոր ներկայացում)
	Բ3	20	Ընթացիկ գործնական աշխատանքների գնահատում
	Բ4	45	Դասընթացի վերջնական ստուգում և գնահատում (ծրագրի կազմում և բանավոր ներկայացում) (խմբային աշխատանք)

1.ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐ (Դասընթացի արդյունավետ յուրացման համար անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ)

Դասընթացն լավագույնս յուրացնելու համար այս մասնագիտության կրթական ծրագիրն ընտրած ուսանողը պետք է՝

- ունենա ընդհանուր գիտելիքներ Հայաստանի Հանրապետության (ՀՀ) պետական կառուցվածքի, պետական կառավարման համակարգի և մարմինների, մասնավորապես՝ կրթության ոլորտի պետական կառավարման համակարգի մասին,
- ծանոթ լինի ՀՀ օրենսդրական դաշտին, այդ թվում՝ կրթության ոլորտի հիմնական օրենքներին և իրավական ակտերին,
- ընդհանուր պատկերացում ունենա պետական մարմինների, բիզնես ոլորտի, քաղաքացիական հասարակության և լրատվամիջոցների փոխազդեցության մասին,
- ունենա տեղեկատվություն՝ այդ թվում վիճակագրական տվյալներ, փնտրելու, հավաքագրելու և վերլուծելու հմտություններ, ինչպես նաև տվյալները աղյուսակների, գրաֆիկների ու դիագրամների միջոցով ներկայացնելու հմտություններ,
- ունենա ընդհանուր մաթեմատիկական գիտելիքներ, մասնավորապես՝ (ա) հասկանա ուղիղ և հակադարձ համեմատական կապը, կարողանա հաշվարկել թվի տոկոսը կամ մասը, (բ) գաղափար ունենա հանրահաշվական արտահայտությունների, հաստատունի ու փոփոխականի մասին, (բ) գաղափար ունենա ֆունկցիայի մասին և հասկանա ֆունկցիայի դերը կիրառական իրադրությունները նկարագրելիս,
- ունենա հայերեն բանավոր և գրավոր խոսքի գերազանց իմացություն,
- բավարար տիրապետի անգլերեն լեզվին, քանի որ հիմնական ու լրացուցիչ մասնագիտական գրականության գերակշիռ մասն անգլերեն լեզվով է,
- ունենա ինքնուրույն և խմբային աշխատանքներ կատարելու հմտություններ:

2.ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Դասընթացը ուսումնասիրում է ոլորտային քաղաքականության վերլուծության և պլանավորման գործընթացները, մոդելները և մեխանիզմները: Մասնավորապես, դասընթացը.

- ներկայացնում է ոլորտային քաղաքականության վերլուծության և մշակման հիմնական փուլերն՝ անդրադարձ կատարելով քաղաքականության մշակման գործընթացում հիմնական մասնակիցների և շահակիցների (պետական կառույցների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, գործարար ոլորտի, միջազգային կազմակերպությունների և այլն) դերին, նրանց ներգրավվածության աստիճանին և ազդեցությանը,
- մասնավորեցնում է քաղաքականության վերլուծության և պլանավորման գործընթացների և շրջափուլերի ուսումնասիրումը կրթության ոլորտի համար՝ էլնելով երկրի սոցիալ-տնտեսական ու աշխարհաքաղաքական զարգացումների համատեքստից,
- ներկայացնում է չափանիշ և ցուցանիշ հասկացություններն ու կրթության ոլորտի հիմնական ցուցանիշները, պարզաբանում է դրանց բնորոշման, հաշվարկման և կիրառման մեթոդները կրթության ոլորտի քաղաքականության վերլուծության մեջ՝ հիմնվելով փաստացի տվյալների վրա,
- քննարկում է կրթության կառավարման տեղեկատվական համակարգի նպատակներն ու գործառույթները և դրա կիրառությունը քաղաքականության մշակման գործընթացում՝ տեղեկացված որոշումների կայացնելու նպատակով,
- ներկայացնում է նեղ ուղղորդված, լայնամասշտաբ և ռազմավարական ծրագրերի կազմման մեթոդաբանությունը՝ որպես քաղաքականության մշակման գործիք,
- անդրադառնում է կրթության պլանավորման սիմուլյացիոն մոդելների օգտագործմանը:

ՀՀ կրթության համակարգի համեմատական վերլուծությունը, համակարգի հետագա զարգացմանն ուղղված քաղականության մշակումը հաղիսանում են դասընթացի բաղկացուցիչ մաս:

3. Դասընթացի նպատակն ու խնդիրները

Դասընթացի հիմնական նպատակն է ուսանողներին տրամադրել տեսական գիտելիքներ և գործնական հմտություններ ոլորտային քաղաքականության վերլուծության ու մշակման գործընթացների վերաբերյալ, ինչպես նաև ուսուցանել մշակված քաղաքականությունն իրականացնելու և դրա ազդեցությունը գնահատելու մեթոդներն ու գործիքակազմը:

Դասընթացի խնդիրներն են.

- ուսուցանել ոլորտային քաղաքականության մշակման շրջափուլերը և սովորեցնել ինքնուրույն կատարել քաղաքականության վերլուծություն և դրա հիման վրա քաղաքականության նոր ուղղությունների մշակում,
- վերլուծել ՀՀ կրթության համակարգի առկա վիճակը և զարգացման ռազմավարությունը, տրամադրել կրթական քաղաքականության իրականացմանն ուղղված ծրագրերի ընթացքն, արդյունավետությունը ու արդյունքները վերլուծելու գիտելիքներ և հմտություններ,
- զարգացնել տվյալների (մասնավորապես կրթության ոլորտի տվյալների) հավաքագրման, վերլուծման ու համադրման կարողությունները, գործնականում կիրառել կառավարման տեղեկատվական համակարգերը,
- ուսուցանել չափանիշ և ցուցանիշ հասկացություններն, դրանց բնորոշման, կազմման, հաշվարկման և կիրառման մեթոդները և զարգացնել դրանք ոլորտի քաղականության մշակման մեջ կիրառելու կարողությունները,
- ծանոթացնել միջազգայնորեն կիրառվող կրթության ոլորտի հիմնական ցուցանիշներին, զարգացնել համեմատական վերլուծությունների և կրթության համակարգերի գնահատման մեջ դրանք կիրառելու հմտությունները,
- ուսուցանել ծրագրերի կառավարման ցիկլը և մեթոդաբանությունը, ինչպես նաև սովորեցնել նեղ ուղղորդված, լայնամասշտաբ ու ռազմավարական զարգացման ծրագրերի կազմման ու ֆինանսական պլանավորման մեխանիզմները՝ կիրառելով տրամաբանական շրջանակի մոտեցումը,

- վերլուծել կենտրոնացված և ապակենտրոնացված կառավարման համակարգերը, կառավարման ապակենտրոնացման քաղաքականության նպատակներն ու խնդիրները, առավելություններն ու թերությունները, ինչպես նաև կառավարման տարբեր մակարդակներում պետական կառավարման մարմինների միջև իրավասությունների և լիազորությունների վերաբաշխումը ապակենտրոնացման գործընթացում,
- սովերեցնել պլանավորման գործընթացում համակարգչային սիմուլիացիոն մոդելների կիրառումը,
- զարգացնել ուսանողների անհատական և թիմային աշխատանքի հմտությունները,
- բարելավել տեղեկատվության հայթայթման և վերլուծման հմտությունները,
- զարգացնել քննական մտածողության և ստեղծագործական հմտությունները,
- զարգացնել հետազոտական աշխատանքներ կատարելու և ակադեմիական շարադրանքի կարողությունները,
- բարելավել անհատական աշխատանքի արդյունքները հստակ ու համակարգված ներկայացնելու և մեկնաբանելու կարողությունները,

Դասընթացի անվանում	Կրթության գնահատում
Դասընթացի տեսակ	Պարտադիր
Կրթական մակարդակ	Մագիստրատուրա
Ուսուցման ձև	Առկա
Ֆակուլտետ	Կրթության և մասնագիտական մանկավարժության/ ԿՄՄ
Կուրս	1-ին
Կիսամյակ	1-ին
Մասնագիտություն	Կրթական գիտություններ
Մասնագիտացում	Կրթության գնահատում և թեստավորում
Ամբիոն կամ դասընթացը վարող ստորաբաժանում	Կրթության կառավարման և պլանավորման ամբիոն

Կրեդիտ	4		
Գնահատման բաղադրիչներ	Բաղադրիչ	%	Բաղադրիչի անվանումը
	F1	20	Ներկայություն և մասնակցություն
	F2	40	Միջանկյալ գնահատում
	F3	40	Ամփոփիչ գնահատում

1. ՆԱԽԱՊԱՅՄԱՆ. Դասընթացի արդյունավետ յուրացման համար անհրաժեշտ են՝
որոշ նախնական պատկերացումներ և տեղեկություններ մանկավարժությունից և մաթեմատիկայից:

2. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ
Դասընթացում ուսումնասիրվում է գնահատման գործընթացը՝ կիրարկված կրթական նպատակների համար: Մահմանվում են գնահատման գործիքի որակի բնութագրման երկու հիմնական հատկությունները՝ հուսալիությունն ու հավաստիությունը: Ուսումնասիրվում են կրթական գնահատումների երկու հիմնական տեսակները՝ գնահատման նպատակից կախված. ձևավերեղ և ամփոփիչ գնահատումները, դիտարկվում են դրանց առանձնահատկություններն ու կիրառությունները կրթության բնագավառում: Արդյունքների կիրառության նպատակից կախված ուսումնասիրվում են բարձր և ցածր վճռոշությամբ գնահատումները, դիտարկվում և քննարկվում են դրանց կարևորագույն օրինակները: Ուսումնական գործընթացում, ժամանակագրական տեսանկյունից առանձնացվում և ուսումնասիրվում են թեստավորման երեք տեսակները. ուսումնառության շեմին, ուսուցման ընթացքում, ուսուցման ավարտին: Նկարագրվում են գնահատման նպատակները և տեսակները, թեստավորումը ներկայացվում է, որպես հասարակագիտական գիտափորձ և գնահատման մեթոդ: Ուսումնասիրվում են թեստավորման մեթոդի նպատակները, առավելությունները, իրագործման եղանակները, արդյունքների ներկայացման ձևերը և կիրառության սահմանափակումները: Նկարագրվում են թեստավորման հիմնական փուլերը, իրականացման քայլերն ու արդյունքների ամփոփումը:

3. Դասընթացի նպատակը
Դասընթացի հիմնական նպատակն է պատրաստել կրթական գնահատումների հիմունքներին տիրապետող մասնագետների՝ ուսանողների մոտ ձևավորել պատկերացում գնահատման նպատակների, խնդիրների և տեսակների մասին, պատկերացում գնահատման գործիքի որակի ապահովման կարևորության ու դրա կիրառությունների մասին ուսումնական գործընթացներում, հասկանալ և ընկալել գնահատման երկու հիմնական ձևերի՝ ձևավորող և ամփոփիչ գնահատումների դրսևորումները, գործառույթները, առանձնահատկությունները, առավելություններըն ու կիրառությունները:

Դասընթացի անվանում	Կրթության կառավարում
Դասընթացի տեսակ	Պարտադիր
Կրթական մակարդակ	Մագիստրատուրա
Ուսուցման ձև	Առկա
Ֆակուլտետ	Կրթության և մասնագիտական մանկավարժության/ ԿՄՄ
Կուրս	1-ին
Կիսամյակ	1-ին
Մասնագիտություն	Կրթական գիտություններ
Մասնագիտացում	Կրթության գնահատում և թեստավորում
Ամբիոն կամ դասընթացը վարող ստորաբաժանում	Կրթության կառավարման և պլանավորման ամբիոն

Կրեդիտ	5		
Գնահատման բաղադրիչներ	Բաղադրիչ	%	Բաղադրիչի անվանումը
	Բ1	10	Ներկայություն, մասնակցություն
	Բ2	25	Միջանկյալ գրավոր գնահատում
	Բ3	35	Ամփոփիչ գրավոր գնահատում
	Բ4	30	Ռեֆերատ

1. ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐ. դասընթացի արդյունավետությունն ապահովելու համար անհրաժեշտ է ապահովել հետևյալ պարտադիր բաղադրիչները՝

Անզլերենի և/կամ ռուսերենի պարտադիր իմացություն (առնվազն B2 մակարդակով՝ ըստ Լեզուների իմացության համաեվրոպական համակարգի (CEFR)), քանի որ առկա մասնագիտական գրականությունը և ժամանակակից գիտահետազոտական հրատարակված աշխատանքները հիմնականում հասանելի են այս լեզուներով: Ուսանողը պետք է կարողանա ինքնուրույն աշխատելու հմտություններ ու կարողություններ ցուցաբերել:

2. ԴԱՄԸՆԹԱՑԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունում կրթության բարեփոխումները կրթության միջազգայնացման և գիտելիքահենք տնտեսության զարգացման արդյունքներն են: Առաջնորդվելով գիտելիքահենք տնտեսության հիմնական պահանջներով, ինչպիսիք են, օրինակ, նորարարական և ստեղծագործ մարդկային կապիտալի զարգացումը, հետազոտական արտադրանքի ստեղծումը՝ ներառյալ գիտակրթականը, ազգային և միջազգային աշխատաշուկաներում դառնում է առանցքային հիմնախնդիր: Ազգային աշխատաշուկայի հնարավոր ընդլայնման և միջազգային աշխատաշուկաների և պահանջների հետ վերջինիս համադրելիության աճող միտումները հանգեցնում են կրթության ոլորտում կառավարման ճկունության պահանջին: Հետևապես, առանցքային խնդիրն ոչ միայն բուհերի գոյատևումն է և կրթական ծառայությունների մատուցումը, այլ նաև կրթության կառավարման և կրթական ծրագրերի կազմակերպման արդյունավետությունն ու գործունակությունը և վերջնարդյունքների արժևորումն ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում: Լինելով հարթակ ստեղծագործ և մտավոր ներուժի զարգացման համար՝ կրթական հաստատությունները ունեն գործառույթներ և հասարակական պատասխանատվության իրենց մասնաբաժինը կրթական արտադրանքի մշակման գործում: Այս համատեքստում, տվյալ դասընթացը նախատեսված է կառավարչական հմտություններին տիրապետող կրթության մասնագետների պատրաստմանը նախնական, ընդհանուր (միջնակարգ), բարձրագույն կրթության ոլորտներում՝ բարձրագույն և մասնագիտական կրթությունը ներառյալ: Դասընթացը նվիրված է Հայաստանում կրթության ոլորտի կառավարման առանձնահատկություններին, այդ համակարգերի գործունեությունը կարգավորող օրենսդրությանը, այդտեղ իրականացվող պետական քաղաքականության

սկզբունքներին, բարեփոխումներին, դպրոցի և քոլեջի կառավարման ժամանակակից ձևերին, սկզբունքներին ու մեթոդներին: Դասընթացի արդյունքում ձեռք բերված գիտելիքները և հմտությունները նպաստում են ուսանողի մագիստրոսական գիտելիքների խորացմանը, ինքնավերլուծությանը, աշխարհայացքի ընդլայնմանը, մտածելակերպի հարստացմանը:

3. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Դասընթացի նպատակն է ապահովել բարձրագույն կրթության կառավարման ոլորտին վերաբերող հասկացությունների խորացված ըմբռնումը և զարգացնել հմտություններ կրթական միջավայրում դրանց կիրառման համար: Հիմնական նպատակներից մեկն է ներկայացնել կրթության կառավարումը և կրթության բարեփոխումները՝ մասնավորապես Բոլոնյան գործընթացի համատեքստում բարձրագույն կրթության բարեփոխումները, ինչպես նաև զարգացնել հմտություններ ու փոխանցել գիտելիքները կրթության կառավարման համակարգային մոտեցումների և հիմնական քաղաքականների, ինչպես նաև ազգային և միջազգային կրթական համակարգերի առանձնահատկությունների վերաբերյալ: Դասընթացի նպատակն է նաև ուսանողներին ծանոթացնել Հայաստանում կրթության ոլորտի կառավարման համակարգի առանձնահատկություններին և այդ բնագավառում պետական քաղաքականության սկզբունքներին, օրենսդրական կարգավորումներին, կրթության զարգացման ռազմավարական գերակայություններին, կրթության ոլորտում վերջին տարիներին իրականացված բարեփոխումներին և կրթության միջազգայնացման գործընթացներին:

Դասընթացի խնդիրներն են՝

- ընդհանուր պատկերացում ունենալ կրթության ազգային համակարգի և կրթության կառավարման հիմնական սկզբունքների, էության և դրույթների (ներառյալ կրթության տարբեր մակարդակների) վերաբերյալ,
- ուսումնասիրել Հայաստանի բարձրագույն կրթության ոլորտի խնդիրները և առկա հիմնախնդիրները ու վերլուծել դրանք ոլորտային բարեփոխումների և Բոլոնիայի սկզբունքների կիրառման տեսանկյունից,
- ուրվագծել Հայաստանում կրթական բարեփոխումների առաջնահերթությունները և ըստ այդ ռազմավարությունների վերլուծել գործնական դաշտում առկա խնդիրները և դրանց բարելավման ուղիները,
- հասկանալ կրթական քաղաքականությունների զարգացումն ու պատմությունը և տարբեր քաղաքականությունների հնարավոր ազդեցություններն ազգային և միջազգային կրթության համակարգերի ու կառավարման մեխանիզմների վրա,
- ուսանողների մոտ սեփական կարծիք ձևավորել դպրոցի կառավարմանը ներկայացվող ժամանակակից պահանջների մասին.
- ուսանողների մոտ ձևավորել համակարգի խնդիրները որոշարկելու ու դրանց հնարավոր լուծումներ գտնելու պարզագույն կարողություններ:

Դասընթացի անվանում	Հետազոտության մեթոդները կրթության ոլորտում
Դասընթացի տեսակ	Պարտադիր
Կրթական մակարդակ	Մագիստրատուրա
Ուսուցման ձև	Առկա
Ցակույտետ	Կրթության և մասնագիտական մանկավարժության/ ԿՄՄ
Կուրս	1-ին
Կիսամյակ	2-րդ
Մասնագիտություն	Կրթական գիտություններ
Մասնագիտացում	Կրթության գնահատում և թեստավորում
Ամբիոն կամ դասընթացը վարող ստորաբաժանում	Կրթության կառավարման և պլանավորման ամբիոն

Կրեդիտ	4		
Գնահատման բաղադրիչներ	Բաղադրիչ	%	Բաղադրիչի անվանումը
	Բ1	10	Ներկայություն և մասնակցություն
	Բ2	20	Առաջին միջանկյալ/գրավոր
	Բ3	30	Ամփոփիչ բանավոր
	Բ4	40	Անհատական աշխատանք/պաշտպանությամբ

<p>1.ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐ. դասընթացի արդյունավետությունն ապահովելու համար անհրաժեշտ է ապահովել հետևյալ պարտադիր բաղադրիչները՝</p> <p>Ուսանողները պետք է որոշակիորեն տիրապետեն կրթության ոլորտի բովանդակությանը և հետազոտություններ իրականացնելու բազային հմտություններին՝ մասնավորապես տվյալների որոնում, դասակարգում, նախնական մշակում: Անհրաժեշտ է ունենալ քննադատական մտածողության և որակական ու քանակական տվյալների մշակման գիտելիքներ: Ուսանողները պետք է տիրապետեն մասնագիտական տեքստեր շարադրելու և պրեզենտացիաներ կազմելու ու ներկայացնելու հմտություններին:</p>
<p>2.ԴԱՍԸՆԹԱՅԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ</p> <p>Դասընթացի շրջանակներում ուսումնասիրվելու են հետևյալ թեմաները՝ Գիտական ճանաչողության մակարդակները Հետազոտությունը որպես գիտաճանաչողական գործընթաց, Գիտական հետազոտության տեսակները Ի՞նչ է մեթոդը և մեթոդաբանությունը Գիտական հետազոտության մեթոդների դասակարգումը, Գիտական հետազոտությունների էմպիրիկ և տեսական մեթոդները, Ինֆորմացիայի ստացման, մշակման, ընդհանրացման, դասակարգման մեթոդները, միջոցները և հնարները:</p>
<p>3.ԴԱՍԸՆԹԱՅԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ</p> <p>Դասընթացնի նպատակներն են՝</p> <ul style="list-style-type: none"> • սովորեցնել ընդհանուր տեսամեթոդաբանական հենք մասնագիտական հետազոտություններ կատարելու համար, • ներկայացնել կրթության ոլորտն ուսումնասիրելու համար կիրառվող հիմնական գիտական մեթոդները և կիրառման առանձնահատկությունները, • ներկայացնել հետազոտության մեթոդների և կրթության ոլորտի կազմակերպման փոխառնչությունները: <p>Դասընթացի խնդիրներն են՝</p> <ul style="list-style-type: none"> • քննարկելու կրթության ոլորտն ուսումնասիրելու համար անհրաժեշտ և կիրառվող մեթոդները և ուսանողների մոտ զարգացնել դրանցով աշխատելու հմտություններ • ուսանողների մոտ զարգացնել ինքնուրույն հետազոտություններ կատարելու հմտություններ • զարգացնել կրթության ոլորտը մասնագիտորեն վերլուծելու և գնահատելու հմտություններ, • զարգացնել հետազոտական նախագծեր կազմելու և գիտահետազոտական աշխատանքներ իրականացնելու որակները

Դասընթացի անվանում	Թեստի դասական և ժամանակակից տեսություններ
Դասընթացի տեսակ	Պարտադիր
Կրթական մակարդակ	Մագիստրատուրա
Ուսուցման ձև	Առկա
Ֆակուլտետ	Կրթության և մասնագիտական մանկավարժության/ ԿՄՄ
Կուրս	1-ին
Կիսամյակ	2-րդ
Մասնագիտություն	Կրթական գիտություններ
Մասնագիտացում	Կրթության գնահատում և թեստավորում
Ամբիոն կամ դասընթացը վարող ստորաբաժանում	Կրթության կառավարման և պլանավորման ամբիոն

Կրեդիտ	3		
Գնահատման բաղադրիչներ	Բաղադրիչ	%	Բաղադրիչի անվանումը
	Բ1	20	Ներկայություն և մասնակցություն
	Բ2	40	Միջանկյալ գնահատում
	Բ3	40	Ամփոփիչ գնահատում

3. ՆԱԽԱՊԱՅՄԱՆ. Դասընթացի արդյունավետ յուրացման համար անհրաժեշտ են՝
ուսանողների մոտ որոշ նախնական պատկերացումներ և տեղեկություններ մանկավարժությունից և մաթեմատիկայից:

4. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ
Դասընթացում ուսումնասիրվում են թեստի դասական և ժամանակակից տեսությունների հիմունքները: Հիմնվելով թեստի դասական տեսության դրույթների վրա սահմանվում է իրական միավորի գաղափարը, տրվում են թեստի հուսալիության և գնահատման սխալանքի սահմանումները: Դիտարկվում են թեստի հուսալիության գործակցի հաշվարկման և գնահատման տարբեր եղանակները: Ներմուծվում է թեստի հավաստիության գաղափարը և նկարագրվում են հավաստիացման եղանակները: Թեստի ժամանակակից տեսության սահմաններում ներմուծվում է հաջողության ֆունկցիայի գաղափարը, և դրա հիմքի վրա սահմանվում են Ռաշի մեկպարամետրանոց և Բիրնբաումի երկպարամետրանոց և եռապարամտր մեդելները: Ուսումնասիրվում են առաջադրանքի բարդության և աշակերտի պատրաստվածության պարամետրերը, նկարագրվում են դրանց գնահատման մեթոդները: Ներմուծվում և ուսումնասիրվում է թեստի ինֆորմացիոն ֆունկցիայի գաղափարը, և այն կիրառվում է թեստի առավել արդյունավետ առաջադրանքների ընտրության հարցում: Կատարվում է թեստի դասական և ժամանակակից տեսությունների համեմատությունը:

3. Դասընթացի նպատակ(ներ)ն ու խնդիրները
Դասընթացի հիմնական նպատակն է պատրաստել թեստաբանության մասնագետների, որոնք տիրապետում են թեստի դասական և ժամանակակից տեսությունների հիմունքներին:

Դասընթացի անվանում	Մասնագիտական օտար լեզու
Դասընթացի տեսակ	Պարտադիր
Կրթական մակարդակ	Մագիստրատուրա
Ուսուցման ձև	Առկա
Ցակույտետ	Կրթության և մասնագիտական մանկավարժության/ ԿՄՄ
Կուրս	1-ին
Կիսամյակ	1-ին և 2-րդ
Մասնագիտություն	Կրթական գիտություններ
Մասնագիտացում	Կրթության գնահատում և թեստավորում
Ամբիոն կամ դասընթացը վարող ստորաբաժանում	Կրթության կառավարման և պլանավորման ամբիոն

Կրեդիտ	2		
Գնահատման բաղադրիչներ	Բաղադրիչ	%	Բաղադրիչի անվանումը
	Բ1	20	Ներկայություն և մասնակցություն
	Բ2	25	Միջանկյալ գնահատում
	Բ3	25	Ամփոփիչ գնահատում
	Բ4	30	Ինքնուրույն աշխատանք

1. ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐ (Դասընթացի արդյունավետ յուրացման համար անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ)

Սույն դասընթացը սկսելու համար ուսանողը պետք է տիրապետի լեզվական գիտելիքների առնվազն B2 մակարդակի՝ ըստ Լեզուների համաեվրոպական համակարգի չափանիշերի, Այսինքն՝

- ուսանողը կարող է հասկանալ իր մասնագիտությանը, ինչպես նաև սոցիալական, գիտական և այլ ոլորտներին առնչվող ընդարձակ տեքստեր,
- քննադատորեն վերլուծել տեքստի տարբեր մասեր,
- ամփոփ շարադրել տեքստերը,
- արտահայտել կարծիքը մասնագիտությանն ու այլ ոլորտներին առնչվող տարբեր թեմաների շուրջ՝ ցուցաբերելով բառապաշարի ու քերականական կառույցների իմացություն,
- զեկույցներ պատրաստել և մասնակցել քննարկումներին և բանավեճերին,
- բացատրել մասնագիտական թեմային առնչվող խնդրի մասին իր տեսակետը՝ ցույց տալով տարբեր կարծիքների առավելություններն ու թերությունները,
- դասընթացին առնչվող ամենատարբեր թեմաների մասին հստակ, մանրամասն տեքստ գրել, զեկուցում կամ էսսե գրել՝ տեղեկություն հաղորդելով կամ որոշակի տեսակետ հիմնավորող կամ հերքող դատողություններ անելով,
- կարող է լսելով ընկալել անգլերեն բանավոր խոսքը՝ կենդանի և ձայնագրված (հեռուստատեսություն, ռադիո, լուրեր, քննարկումներ և այլն) այնպես, որ կարողանա բանավոր և գրավոր ներկայացնել դրանց համառոտ բովանդակությունը՝ օգտագործելով տվյալ ոլորտին հատուկ բառապաշար,
- ունենա ինքնուրույն և խմբային աշխատանքներ կատարելու հմտություններ:

2. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Տվյալ դասընթացը նախատեսված է մագիստրատուրայի «Կրթության գնահատում և թեստավորում» բաժնի 1-ին կուրսի ուսանողների համար: Դասընթացի հիմքում ընկած են Content and Language Integrated Learning (henceforth CLIL) (բովանդակության վրա հիմնված ուսուցում) մեթոդաբանության սկզբունքները, որոնք հնարավորություն են տալիս զարգացնել ուսանողների լեզվական, մասնագիտական գիտելիքները, հաղորդակցման հմտությունները մասնագիտական ոլորտին առնչվող տեքստերի ու դրանց բառապաշարի ուսումնասիրման, քննարկման ու վերլուծության միջոցով:

Դասընթացի շրջանակներում կիրառվելու է կրթության գնահատմանն ու թեստավորմանն առնչվող գրականություն, որի ցանկը նախապես տրամադրվում է ուսանողներին: Դասընթացի շրջանակներում շեշտադրվելու է մասնագիտական ոլորտին առնչվող տեքստերի վերլուծական ընթերցանությունը, բառապաշարի ճիշտ օգտագործման ուսուցումը, մասնագիտական ոլորտին առնչվող թեմաների քննարկումն ու ուսանողների կողմից ինքնուրույն և խմբային աշխատանքների իրականացումը:

Ուսանողները ընթերցելու և վերլուծելու են մասնագիտական ոլորտին առնչվող անգլալեզու տեքստեր, հոդվածներ, ունկնդրելու են համապատասխան ուղղվածության անգլալեզու ծրագրեր, ինչպես նաև օգտագործելով հիմնական թեմատիկ բառապաշարը՝ պատրաստելու են թեմատիկ պաստառներ և ներկայացումներ (PPT): Քննարկումներ են անցկացվելու կրթության ու գնահատմանն առնչվող արդի խնդիրների, թեստավորման և հարցումների իրականացման ու վերլուծության թեմաների շուրջ, ինչը կամրապնդի ուսանողների բանավոր խոսքի հմտությունները: Մասնավորապես, դասընթացը

- զարգացնում է մասնագիտական գիտելիքները և բառապաշարը
- ծանոթացնում է գնահատման նպատակների և գործընթացի հետ
- ծանոթացնում է գնահատման և թեստավորման առանձնահատկությունների և տարբեր տեսակների հետ
- ուսումնասիրում է արդյունավետ գնահատման օրինակները
- ծանոթացնում է այլ երկրների փորձի հետ

2.1 Դասընթացի նպատակն ու խնդիրները

Սույն դասընթացի նպատակն է՝

- կատարելագործել ուսանողների՝ անգլերեն լեզվով հաղորդակցման հմտությունները ինչպես մասնագիտական, այնպես էլ հաղորդակցման ոլորտներում,
- նպաստել ուսանողների մոտ մասնագիտական բառապաշարի ընդլայնմանն ու յուրացմանը,
- զարգացնել ուսանողների՝ տեքստերի իմաստային մեկնաբանման, քննադատական մտածողության, բառերի համատեքստային իմաստների զանազանման, ազդերենով թեստերի մշակման և կիրառման հմտությունները,
- ձևավորել գիտական բանավոր և գրավոր հաղորդակցման հմտություններ:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ

Դասընթացի անվանում	Կրթության բովանդակություն
Դասընթացի տեսակ	Պարտադիր
Կրթական մակարդակ	Մագիստրատուրա
Ուսուցման ձև	Առկա
Ֆակուլտետ	Կրթության և մասնագիտական մանկավարժության/ ԿՄՄ
Կուրս	1-ին
Կիսամյակ	1-ին
Մասնագիտություն	Կրթական գիտություններ
Մասնագիտացում	Կրթության գնահատում և թեստավորում
Ամբիոն կամ դասընթացը վարող ստորաբաժանում	Կրթության կառավարման և պլանավորման ամբիոն

Կրեդիտ	4		
Գնահատման բաղադրիչներ	Բաղադրիչ	%	Բաղադրիչի անվանումը
	Բ1	10	Ներկայություն և մասնակցություն
	Բ2	25	Միջամկյալ գնահատում
	Բ3	20	Գործնական աշխատանքների գնահատում
	Բ4	45	Ամփոփիչ քննություն

1. ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐ (Դասընթացի արդյունավետ յուրացման համար անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ)

Դասընթացն լավագույնս յուրացնելու համար այս մասնագիտության կրթական ծրագիրն ընտրած ուսանողը պետք է

- ունենա ընդհանուր գիտելիքներ Հայաստանի Հանրապետության (ՀՀ) կրթական համակարգի կառուցվածքի մասին,
- ծանոթ լինի ՀՀ կրթության ոլորտի հիմնական օրենքներին և իրավական ակտերին,
- ունենա անհրաժեշտ տեղեկատվությունը, այդ թվում վիճակագրական տվյալները, փնտրելու, հավաքագրելու և վերլուծելու հմտություններ, ինչպես նաև տվյալները աղյուսակների, գրաֆիկների ու դիագրամների միջոցով ներկայացնելու հմտություններ,
- ունենա ընդհանուր մաթեմատիկական գիտելիքներ, մասնավորապես՝ (ա) հասկանա ուղիղ և հակադարձ համեմատական կապը, կարողանա հաշվարկել թվի տոկոսը կամ մասը, (բ) գաղափար ունենա հաստատունի ու փոփոխականի մասին, (գ) գաղափար ունենա ֆունկցիայի մասին և հասկանա ֆունկցիայի դերը կիրառական իրադրությունները նկարագրելիս,
- ունենա հայերեն բանավոր և գրավոր խոսքի գերազանց իմացություն,
- բավարար տիրապետի անգլերենին և/կամ ռուսերենին առնվազն B1 մակարդակին համապատասխան ըստ Լեզուների իմացության համաեվրոպական համակարգի (CEFR),
- ունենա ինքնուրույն և խմբային աշխատանքներ կատարելու հմտություններ:

2. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

- Դասընթացը ուսումնասիրում է կրթության բովանդակության ձևավորման հիմքում ընկած սկզբունքները, այս ոլորտում առկա միջազգայի փորձը, առկա մոդելներն ու մեխանիզմները: Մասնավորապես, դասընթացը.
- ներառում է կրթության բովանդակության հիմնարար հասկացությունների և տեսական հիմքերի հակիրճ նկարագրությունը,
- ներկայացնում է կրթության բովանդակության ձևավորման մանկավաժական և մեթոդաբանական հիմքերը, համաշխարհային զարգացումներով պայմանավորված տարատեսակ գործոնների ազդեցությունները, ժամանակակից մոտեցումները,

- դիտարկում է ուսումնասության արդյունքների գնահատման և կրթության բովանդակության փոխառնչությունները,
- քննարկում է բովանդակության ձևավորման և ներկայացման, իրավանորմատիվային կարգավորման խնդիրները ՀՀ կրթական համակարգում,

Դասընթացն իրականացվում է դասախոսությունների և ուսուցման իտերակտիվ մեթոդների համակցմամբ՝ ներառելով անհատական և խմբային գործնական աշխատանքների կատարում ու ծրագրերի կազմում:

3. Դասընթացի նպատակն ու խնդիրները

Դասընթացի հիմնական նպատակն է ուսանողներին տրամադրել տեսական գիտելիքներ և զարգացնել գործնական հմտություններ կրթության բովանդակության վերլուծության ու մշակման գործընթացների վերաբերյալ, ձևավորել այս ոլորտում տարատեսակ մշակումներ իրականացնելու և ստացած արդյունքները գնահատելու կարողություններ:

Դասընթացի խնդիրներն են.

- ուսանողներին տրամադրել կրթության բովանդակության ոլորտին վերաբերող առանցքային գիտելիքներ,
- ներկայացնել «կրթության բովանդակություն» հասկացության ժամանակակից սահմանումների տարապատկերը, ծանոթացնել կրթության բովանդակության ձևավորման տարբեր մոտեցումներին, մոդելներին, միջազգային փորձին,
- լուսաբանել կրթության բովանդակության ձևավորման և ներկայացման ոլորտներում ինտեգրման և դիֆերենցման սկզբունքների արդյունավետ զուգորդման հիմնախնդիրը,
- բացահայտել կրթության բովանդակության և գնահատման համակարգերի կապը,
- նպաստել ուսանողների վերլուծական, ստեղծագործական, քննադատական մտածողության զարգացմանը,
- Ջարգացնել ոլորտին վերաբերող անհրաժեշտ տեղեկատվություն հավաքելու, վերլուծելու, ձեռք բերած գիտելիքները արդյունավետ կիրառելու, կոնկրետ ուսումնասիրություններ կատարելու, խնդիրներ լուծելու կարողություններ,
- զարգացնել ոլորտին վերաբերող առանցքային գիտելիքները մասնագիտական գործունեության տարբեր իրավիճակներում կիրառելու կարողություններ:

Դասընթացի անվանում	Կրթության չափում և հոգեչափություն
Դասընթացի տեսակ	Պարտադիր
Կրթական մակարդակ	Մագիստրատուրա
Ուսուցման ձև	Առկա
Տակուլտետ	Կրթության և մասնագիտական մանկավարժության/ ԿՄՄ
Կուրս	1-ին
Կիսամյակ	1-ին
Մասնագիտություն	Կրթական գիտություններ
Մասնագիտացում	Կրթության գնահատում և թեստավորում
Ամբիոն կամ դասընթացը վարող ստորաբաժանում	Կրթության կառավարման և պլանավորման ամբիոն

Կրեդիտ	4		
Գնահատման բաղադրիչներ	Բաղադրիչ	%	Բաղադրիչի անվանումը
	Բ1	10	Ներկայություն և մասնակցություն
	Բ2	25	Միջանկյալ քննություն
	Բ3	20	Գործնական աշխատանքների գնահատում
	Բ4	45	Ամփոփիչ քննություն

3. ՆԱԽԱՊԱՅՄԱՆ. Դասընթացի արդյունավետ յուրացման համար անհրաժեշտ են՝
ուսանողների մոտ որոշ նախնական պատկերացումներ և տեղեկություններ մանկավարժությունից և մաթեմաթիկայից:

4. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ
Դասընթացում ուսումնասիրվում են գնահատման նպատակները և տեսակները, թեստավորումը ներկայացվում է, որպես գնահատման մեթոդ: Ուսումնասիրվում են թեստավորման մեթոդի նպատակները, առավելությունները, իրագործման եղանակները, արդյունքների ներկայացման ձևերը: Բերվում են թեստի արդյունքների որոշ վիճակագրական բնութագրիչներ, միջին դիրքի բնութագրիչներ, սանդղակների տեսակներ: Սահմանվում և նկարագրվում են թեստի և թեստային առաջադրանքների հիմնական բնութագրիչները: Դիտարկվում են թեստային առաջադրանքների հիմնական տեսակները՝ դրանց հատկությունները, առավելություններն ու կիրառման սահմանափակումները: Նկարագրվում են թեստի, թեստային առաջադրանքների և հարցաշարերի մշակման սկզբունքներն ու իրագործման փուլերը:

2.1 Դասընթացի նպատակ(ներ)ն ու խնդիրները
Դասընթացի հիմնական նպատակն է պատրաստել թեստաբանության հիմունքներին տիրապետող մասնագետների՝ ուսանողների մոտ ձևավորել պատկերացում թեստաբանության նպատակների, ընդհանուր դրույթների, տեսակների մասին, ներկայացնել թեստավորումը որպես գնահատման մեթոդ, սահմանել դրա հատկությունները, առավելությունները և կիրառությունները:

Դասընթացի անվանում	Համեմատական կրթություն (ըստ կրթական տարածքների)
Դասընթացի տեսակ	Պարտադիր
Կրթական մակարդակ	Մագիստրատուրա
Ուսուցման ձև	Առկա
Ցակույտետ	Կրթության և մասնագիտական մանկավարժության/ ԿՄՄ
Կուրս	1-ին
Կիսամյակ	2-րդ
Մասնագիտություն	Կրթական գիտություններ
Մասնագիտացում	Կրթության գնահատում և թեստավորում
Ամբիոն կամ դասընթացը վարող ստորաբաժանում	Կրթության կառավարման և պլանավորման ամբիոն

Կրեդիտ	4		
Գնահատման բաղադրիչներ	Բաղադրիչ	%	Բաղադրիչի անվանումը
	F1	10	Ներկայություն և մասնակցություն
	F2	30	Միջանկյալ գրավոր գնահատում
	F3	30	Ամփոփիչ բանավոր գնահատում
	F4	30	Անհատական աշխատանք (պաշտպանությամբ)

1.ՆԱԽԱՊԱՅՄԱՆ. Դասընթացի արդյունավետ յուրացման համար անհրաժեշտ է՝

Դասընթացի յուրացման համար անհրաժեշտ նախապայման է ուսանողների՝ կրթության ոլորտում տեղի ունեցող զարգացումների և բարեփոխումների վերաբերյալ իրազեկվածությունը, ինչպես նաև կրթության ոլորտի հիմնախնդիրների նկատմամբ հետաքրքրությունը: Դասընթացն առավելագույնս արդյունավետ յուրացնելու համար անհրաժեշտ է, որ ուսանողները տիրապետեն անգլերենին և ռուսերենին, քանի որ հիմնական ու լրացուցիչ մասնագիտական գրականությունը հիմնականում առկա է այդ լեզուներով: Ուսանողները պետք է ունենան նաև ինքնուրույն աշխատանքի կարողություններ ու տիրապետեն քննադատական վերլուծության հմտություններին:

2. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

21-րդ դարում գիտելիքահենք տնտեսության ձևավորման և տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների արագընթաց զարգացման համատեքստում յուրաքանչյուր պետության առաջընթացն ու միջազգային մրցունակությունը պայմանավորված են մարդկային կապիտալով, իսկ կրթության համակարգը համարվում է մարդկային կապիտալի ձևավորումն ու զարգացումն ապահովող հիմնարար ինստիտուտ: Գլոբալացումը, կրթության մասսայականացումը, միջազգայնացումը, ինչպես նաև այդ գործոններով պայմանավորված միջազգային ասպարեզում մրցունակության ուժեղացումն էապես ազդում են ազգային և միջազգային մակարդակներում աշխատաշուկայի պահանջների փոփոխությունների վրա և դրդում վերանայելու կրթության ոլորտի կառավարման որոշակի հայեցակետեր:

Վերոնշյալ գործոնները պայմանավորել են զարգացած և զարգացող երկրներում կրթական համակարգերի բարեփոխումները, որոնք տեղի են ունենում նաև ՀՀ կրթության համակարգում Բոլոնիայի գործընթացին անդամակցելուց ի վեր: ՀՀ կրթական բարեփոխումների իրականացման և Եվրոպական բարձրագույն կրթության տարածք ինտեգրման գործընթացներով պայմանավորված՝ կարևորվել է կրթության կառավարման միջազգային փորձի ուսումնասիրությունն ու լավագույն փորձի տեղայնացումը:

Մույն դասընթացը նախատեսված է կրթության ոլորտի կառավարիչների, կրթության ոլորտում քաղաքականություն մշակող և/կամ այն իրականացնող մասնագետների համար, քանի որ վերջիններս պետք է առավելապես տեղեկացված լինեն և գիտակցեն, որ ազգային մակարդակում կրթության կազմակերպման գործընթացներում անհրաժեշտ է հաշվի առնել նաև գլոբալ

համատեքստի պահանջները: Դասընթացի նպատակն է ներկայացնել համեմատական կրթությունը՝ որպես ինքնուրույն գիտակարգ, որը զբաղվում է տարբեր երկրներում կրթության քաղաքականության և կրթության կազմակերպման փորձի ուսումնասիրությամբ ու համեմատական վերլուծությամբ: Դասընթացի նպատակն է համեմատական ուսումնասիրությունների հիման վրա ներկայացնել կրթության կառավարման ռազմավարություններն ու ուղենիշներն ազգային և միջազգային մակարդակներում:

Դասընթացը բաղկացած է երկու մոդուլներից, որոնք ներառում են այնպիսի թեմաներ, որոնք են համեմատական կրթության հայեցակարգային շրջանակը, համեմատական կրթության՝ որպես ինքնուրույն գիտակարգի ձևավորման և զարգացման փուլերը, համեմատական կրթության ուսումնասիրության մեթոդներն ու մոտեցումները, կրթության կազմակերպման գործընթացների առանձնահատկությունները, ընդհանրություններն ու տարբերությունները ըստ կրթական տարածքների:

3. Դասընթացի նպատակն ու խնդիրները

«Համեմատական կրթություն (ըստ կրթական տարածքների)» դասընթացի նպատակներն են՝

- ծանոթացնել ուսումնառողներին համեմատական կրթության՝ որպես ինքնուրույն գիտակարգի հայեցակարգային շրջանակին և զարգացման հեռանկարներին,
- ուսումնառողների մոտ ձևավորել ամբողջական պատկերացում տարբեր երկրների կրթական համակարգերի մասին՝ դրանք համեմատելով և հակադրելով ազգային կրթական համակարգին,
- ձևավորել ուսումնառողների՝ տարբեր երկրներում կրթության կառավարման վերաբերյալ տեսական գիտելիքներ և մասնագիտական հմտություններ,
- զարգացնել կրթության ոլորտի խնդիրների ընկալման և դրանց լուծմանն ուղղված մեթոդների հայտնաբերման կարողություններ:

«Համեմատական կրթություն (ըստ կրթական տարածքների)» դասընթացի խնդիրներն են՝

- ներկայացնել համեմատական կրթության՝ որպես ինքնուրույն գիտակարգի ձևավորման փուլերն ու զարգացման ժամանակագրությունը,
- ներկայացնել այդ գիտակարգի կապը այլ գիտակարգերի հետ,
- ներկայացնել համեմատական կրթության մեթոդներն ու ուսումնասիրության հիմնական մոտեցումները,
- ուսումնասիրել առաջատար երկրների կրթական համակարգերի առանձնահատկություններն ու այդ կրթական համակարգերում բարեփոխումների հիմնական ուղղությունները,
- համեմատել և հակադրել զարգացած ու զարգացող երկրների կրթական համակարգերը՝ բացահայտելով ընդհանրություններն ու տարբերությունները,
- ներկայացնել ՀՀ-ում կրթության ոլորտի բարեփոխումներն ու համեմատական վերլուծության միջոցով բացահայտել ոլորտում առկա բացթողումները,
- բացահայտել կրթության զարգացման միտումները ամբողջ աշխարհում:

Դասընթացի անվանում	Ազգային և միջազգային կրթական հետազոտություններ
Դասընթացի տեսակ	Պարտադիր
Կրթական մակարդակ	Մագիստրատուրա
Ուսուցման ձև	Առկա
Ֆակուլտետ	Կրթության և մասնագիտական մանկավարժության/ ԿՄՄ
Կուրս	1-ին
Կիսամյակ	2-րդ
Մասնագիտություն	Կրթական գիտություններ
Մասնագիտացում	Կրթության գնահատում և թեստավորում
Ամբիոն կամ դասընթացը վարող ստորաբաժանում	Կրթության կառավարման և պլանավորման ամբիոն

Կրեդիտ	3		
Գնահատման բաղադրիչներ	Բաղադրիչ	%	Բաղադրիչի անվանումը
	Բ1	10	Ներկայություն և մասնակցություն
	Բ2	30	Միջանկյալ քննություն
	Բ3	30	Գործնական աշխատանքների գնահատում
	Բ4	30	Ամփոփիչ քննություն (ինքնուրույն աշխատանքի գնահատում)

1.ՆԱԽԱՊԱՅՄԱՆ. Դասընթացի արդյունավետ յուրացման համար անհրաժեշտ է՝

Այս դասընթացն ընտրած ուսանողները պետք է ունենան ինչպես ռուսերեն և անգլերեն լեզվի բավարար իմացություն, այնպես էլ ինքնուրույն աշխատանքի հմտություններ և հետազոտական կարողություններ:

2.ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

«Ազգային և միջազգային կրթական հետազոտություններ» դասընթացն իր նշանակությամբ առանցքային և կարևոր տեղ է զբաղեցնում կրթության ոլորտում գնահատման մասնագետների պատրաստման գործում, քանի որ քննարկվում են կրթության ոլորտում ազգային և միջազգային հետազոտությունների նպատակները և խնդիրները, մեթոդաբանությունը, գործիքակազմը, հանրակրթության որակի ներքին և արտաքին գնահատման մեխանիզմները և այլն: Ցանկացած կրթական ծրագիր կարող է լիարժեք իրականացվել միայն ուսումնական գործընթացի արդյունավետ կառավարման և պլանավորման միջոցով, որի իրականացումն ապահովելու հասնելու համար անհրաժեշտ են համակարգված գիտելիքներ ու համապատասխան հմտություններ: Տարբեր երկրների սովորողների ուսումնական ձեռքբերումների գնահատման հետազոտությունները թույլ են տալիս դիտարկել կրթական վերջնարդյունքների առկա կապն ինչպես կրթակարգի, այնպես էլ ուսումնական գործընթացի կազմակերպման, ուսումնական գործընթացի մասնակիցների սոցիալական վիճակի, կրթական ցենզի և շատ այլ գործոնների միջև:

Սույն դասընթացի ուսումնասիրության արդյունքում ուսանողների ձեռք բերված գիտելիքները և հմտությունները հնարավորություն կտան ամբողջական և հստակ պատկերացում կազմել հանրակրթության որակի գնահատման ժամանակակից միջազգային և ազգային կրթական հետազոտություններին, դրանց մեթոդաբանական սկզբունքների և դերի վերաբերյալ: Այսպիսով, դասընթացն ընդգրկում է հանրակրթության ոլորտում միջազգային և ազգային կրթական հետազոտությունների վերաբերյալ ժամանակակից մոտեցումները և զարգացման հետագա միտումները:

3. Դասընթացի նպատակն ու խնդիրները

Դասընթացի նպատակը և խնդիրներն են ուսանողներին

- ծանոթացնել միջազգային և ազգային կրթական հետազոտություններին, դրանց բովանդակությանը, գործիքակազմին, կազմակերպման ընդհանուր սկզբունքներին, մեթոդներին, առանձնահատկություններին,
- տալ կրթական հետազոտությունների վերաբերյալ հիմնարար գիտելիքներ,
- ձևավորել հանրակրթության ոլորտում տարբեր ռիզիկոություններով գնահատումներ և համապատասխան հետազոտություններ իրականացնելու անհրաժեշտ կարողություններ և հմտություններ:

Դասընթացի անվանում	Դպրոցի կառավարում
Դասընթացի տեսակ	Պարտադիր
Կրթական մակարդակ	Մագիստրատուրա
Ուսուցման ձև	Առկա
Ցանկույտեն	Կրթության և մասնագիտական մանկավարժության/ ԿՄՄ
Կուրս	1-ին
Կիսամյակ	2-րդ
Մասնագիտություն	Կրթական գիտություններ
Մասնագիտացում	Կրթության գնահատում և թեստավորում
Ամբիոն կամ դասընթացը վարող ստորաբաժանում	Կրթության կառավարման և պլանավորման ամբիոն

Կրեդիտ	3		
Գնահատման բաղադրիչներ	Բաղադրիչ	%	Բաղադրիչի անվանումը
	Բ1	10	Ներկայություն և մասնակցություն
	Բ2	25	Միջանկյալ քննություն
	Բ3	20	Գործնական աշխատանքների գնահատում
	Բ4	45	Ամփոփիչ քննություն (ինքնուրույն աշխատանքի գնահատում)

1.ՆԱԽԱՊԱՅՄԱՆ. Դասընթացի արդյունավետ յուրացման համար անհրաժեշտ է՝
 Այս դասընթացն ընտրած ուսանողները պետք է ունենան հայերեն լեզվի գերազանց իմացություն, ռուսերեն և անգլերեն լեզվի բավարար իմացություն, այնպես էլ ինքնուրույն աշխատանքի հմտություններ և հետազոտական կարողություններ:

2.ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ
 Ցանկացած երկրում, հանրակրթության ոլորտը առանցքային տեղ է զբաղում կրթության համակարգում՝ իր նշանակությամբ, ընդգրկվածությամբ, նպատակներով և խնդիրներով: Լինելով կրթության ոլորտում պետական պատվերի հիմնական կատարողը, հանրակրթության համակարգը իրականացնում է ապագա սերնդի կրթությունը՝ պետական քաղաքականության տրամաբանության շրջանակներում: Այսինքն, հանրակրթության ոլորտն ունի իր առանձնահատուկ նպատակները, խնդիրները և կառավարման անձնահատուկությունները: Հետևաբար, դասընթացի այս բաղադրիչն կարևոր տեղ է զբաղեցնում ոչ միայն կրթության, այլև ընդհանրապես ցանկացած ոլորտի ապագա կառավարիչների պատրաստման գործում: Ցանկացած կրթական ծրագիր կարող է լիարժեք իրականացվել միայն ուսումնական գործընթացի արդյունավետ կառավարման և պլանավորման միջոցով, որի իրականացումն ապահովելու հասնելու համար անհրաժեշտ են համակարգված գիտելիքներ ու համապատասխան հմտություններ: Դասընթացի արդյունքում ուսանողների ձեռք բերված գիտելիքները և հմտությունները հնարավորություն կտան վերջիններիս ամբողջական և հստակ պատկերացում կազմել հանրակրթական համակարգի կառավարման, դպրոցներում ուսումնասիրաստիարակչական գործընթացների կազմակերպման, դրա գործունեության պլանավորման փուլերի, օրինաչափությունների, վերահսկման մեխանիզմների մասին և կնպաստեն զարգացնելու ինքնակրթությամբ զբաղվելու կարողությունները: Այսպիսով, դասընթացն ընդգրկում է հանրակրթության ոլորտի օրենսդրական կարգավորման, հանրակրթական ուսումնական հաստատությունների գործունեության կառավարման, կազմակերպման, վերահսկման, գնահատման, ինչպես նաև ուսումնական գործընթացի հետագա զարգացման հնարավորությունները և այլ հիմնախնդիրներ:

3. Դասընթացի նպատակն ու խնդիրները
 Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ գիտելիքներ հանրակրթության ոլորտի և դպրոցների

կառավարման սկզբունքների, ժամանակակից մեթոդների կիրառման վերաբերյալ և նրանց մոտ ձևավորել կառավարման ոլորտում համապատասխան մասնագիտական կոմպետենցիաներ:

Դասընթացի խնդիրներն են.

- ներկայացնել հանրակրթության համակարգի ընդհանուր կառուցվածքը, դպրոցների կառավարման մարմինները և դրանց իրավասություններն ու պարտականությունները;
- ներկայացնել դպրոցների գործունեության կառավարման առանձնահատկությունները, ընդհանուր սկզբունքները,
- ուսուցանել դպրոցներում ուսումնական գործընթացի կառավարման և պլանավորման վերաբերյալ հիմնարար գիտելիքներ,
- ձևավորել դպրոցի կառավարման, մասնավորապես, ներդպրոցական կառավարման և վերահսկողության համար անհրաժեշտ կարողություններ և հմտություններ,
- զարգացնել դպրոցների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության, տարաբնույթ տվյալների հայվաքազման, վերլուծման և ամփոփման հմտությունները,
- ներկայացնել դպրոցների նորարարական գործունեության ընդհանուր ուղղությունները և զարգացման միջազգային միտումները:

Դասընթացի անվանում	Ռազմավարական կառավարում
Դասընթացի տեսակ	Պարտադիր
Կրթական մակարդակ	Մագիստրատուրա
Ուսուցման ձև	Առկա
Ֆակուլտետ	Կրթության և մասնագիտական մանկավարժության/ ԿՄՄ
Կուրս	1-ին
Կիսամյակ	2-րդ
Մասնագիտություն	Կրթական գիտություններ
Մասնագիտացում	Կրթության գնահատում և թեստավորում
Ամբիոն կամ դասընթացը վարող ստորաբաժանում	Կրթության կառավարման և պլանավորման ամբիոն

Կրեդիտ	4		
Գնահատման բաղադրիչներ	Բաղադրիչ	%	Բաղադրիչի անվանումը
	F1	10	Ներկայություն և մասնակցություն
	F2	30	Միջանկյալ գնահատում
	F3	30	Հետազոտական աշխատանք /պաշտպանությամբ/
	F4	30	Ամփոփիչ գրավոր գնահատում

1. ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐ. դասընթացի արդյունավետությունն ապահովելու համար անհրաժեշտ է ապահովել հետևյալ պարտադիր բաղադրիչները՝

Անգլերենի և/կամ ռուսերենի պարտադիր իմացություն (առնվազն B2 մակարդակով՝ ըստ Լեզուների իմացության համաեվրոպական համակարգի (CEFR)), քանի որ առկա մասնագիտական գրականությունը և ժամանակակից գիտահետազոտական հրատարակված աշխատանքները հիմնականում հասանելի են այս լեզուներով: Ուսանողը պետք է կարողանան վերլուծելու և ինքնուրույն աշխատելու հմտություններ ու կարողություններ ցուցաբերել:

Այս դասընթացի արդյունավետ յուրացման համար ուսանողները պետք է՝

- ունենան ինքնուրույն, վերլուծական-քննադատական մտածողություն և փաստարկումներով սեփական տեսակետը հիմնավորելու կարողություն,
- տիրապետեն կառավարման, հանրային կառավարման և գործառնական կառավարման ոլորտների տեսական հիմնադրույթներին ու սկզբունքներին,
- ակտիվորեն ներգրավված լինեն դասընթացի շրջանակում իրականացվող քննարկումներին և սեմինարներին,
- տիրապետեն ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաներին՝ մասնագիտական գրականության, անհատական և թիմային աշխատանքների կատարման արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ տվյալներ որոնելու և դրանք նպատակային կերպով կիրառելու նպատակով,
- տիրապետեն անհատական/թիմային աշխատանքների կատարման սկզբունքներին և կառավարման հմտություններին:

2. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Ռազմավարական կառավարումը կազմակերպության գործունեության կառավարման գործընթացն է, որի միջոցով կազմակերպությունն իր ռեսուրսների օգտագործմամբ և սահմանված գործառնությունների ու գործառնությունների գործադրմամբ իրականացնում է սահմանված կանոնադրական և ռազմավարական նպատակների իրագործումը գործունեության երկարաժամկետ զարգացումն ու գործունեության ոլորտային դաշտում իր մրցունակությունն ապահովելու նպատակով:

Գիտելիքահենք տնտեսության մրցակցային պայմաններում ինչպես մակրոտնտեսական, այնպես էլ միկրոտնտեսական առումով առանձնահատուկ դեր ու նշանակություն են ստանում մասնագիտական կրթության արդյունավետ կազմակերպման և պլանավորման հիմնահարցերը: Այդ առումով բուհերի ռազմավարական կառավարման նկատմամբ համալիր և համակարգված մոտեցումը դառնում է առանցքային խնդիր, քանի որ արդյունավետ ռազմավարական կառավարման միջոցով բուհերը կարող են լուծել մասնագիտական կրթության պլանավորման, կազմակերպման ու իրականացման արդի հիմնախնդիրները: Այս դասընթացն անդրադառնում է ռազմավարական կառավարման, ներառյալ ռազմավարական պլանավորման հիմնական հասկացություններին և հնարավորություն է տալիս ծանոթանալու ռազմավարական կառավարման գաղափարին, օգտագործելու ռազմավարական մտածելակերպի առավելությունները և գործնական աշխատանքների կատարման միջոցով տիրապետելու ռազմավարական պլանավորման որոշակի գործիքների:

Դասընթացի հիմնական բաժիններն են՝ իրավիճակի և կազմակերպության կարողությունների գնահատում, ուժեղ և թույլ կողմերի վերլուծություն, կազմակերպության առաքելության և տեսլականի սահմանում, ռազմավարական նպատակների և գերակայությունների սահմանում, գործողությունների/միջոցառումների պլանավորում, որոշումների կայացման և բարձրագույն ուսումնական հաստատությունների շահակիցների օրինակելի ձևաչափերով ներկայացված համալսարանի կառուցվածքը, կառավարման համակարգը և կրթական միջավայրի վերլուծության մեխանիզմները: Առանձին քննարկվելու են ՀՀ կրթության ոլորտում իրականացվող ռազմավարական պլանավորման օրինակներ և գործնական աշխատանքներ:

2.1 Դասընթացի նպատակն ու խնդիրները

Դասընթացի նպատակն է ներկայացնել ռազմավարական կառավարման էությունն ու հիմնական փուլերը, կազմակերպությունների, ներառյալ բուհերի ռազմավարական կառավարման համակարգերն ու հիմնախնդիրները՝ ոլորտային գիտելիքների փոխանցման և մասնագիտական կարողությունների ու համապարփակ հմտությունների զարգացման միջոցով, ինչպես նաև ռազմավարական պլանավորման գործիքները, որոնց կիրառմամբ բուհերը կարող են խթանել իրենց ռազմավարական կառավարման համակարգերի արդյունավետությունը:

Դասընթացի խնդիրներն են՝

- հստակ պատկերացում կազմել ռազմավարական կառավարման գործընթացի, դրա արդյունավետության վրա ազդող միջավայրային գործոնների և շահակիցների մասին,
- ուսումնասիրել և վերլուծել ռազմավարական կառավարման հիմնախնդիրները, բաղադրիչներն ու փուլերը, հիմնադրույթները և սկզբունքները,
- վերլուծել և քննարկել ռազմավարական կառավարման ժամանակակից և ավանդական մոտեցումները, գործիքները, կազմակերպությունների, ներառյալ բուհերի ռազմավարական կառավարման հիմնախնդիրները ռազմավարական կառավարման արդյունավետության և կրթության մարտահրավերների հաղթահարման տեսանկյունից,
- ուսումնասիրել կազմակերպությունների ռազմավարական պլանավորման հիմնախնդիրները, ռազմավարական պլանավորման ժամանակակից գործիքներն ու միջոցները,
- վերլուծության ենթարկել կազմակերպությունների ռազմավարական կառավարման բաղադրիչները, մշակված ռազմավարություններն ու ռազմավարական պլանավորման փաստաթղթերը:

Դասընթացի անվանում	Կրթության որակի կառավարում
Դասընթացի տեսակ	Պարտադիր
Կրթական մակարդակ	Մագիստրատուրա
Ուսուցման ձև	Առկա
Ֆակուլտետ	Կրթության և մասնագիտական մանկավարժության/ ԿՄՄ
Կուրս	1-ին
Կիսամյակ	2-րդ
Մասնագիտություն	Կրթական գիտություններ
Մասնագիտացում	Կրթության գնահատում և թեստավորում
Ամբիոն կամ դասընթացը վարող ստորաբաժանում	Կրթության կառավարման և պլանավորման ամբիոն

Կրեդիտ	4		
Գնահատման բաղադրիչներ	Բաղադրիչ	%	Բաղադրիչի անվանումը
	Բ1	10	Ներկայություն և մասնակցություն
	Բ2	30	Միջանկյալ գրավոր գնահատում
	Բ3	30	Ամփոփիչ գրավոր գնահատում
	Բ4	30	Անհատական աշխատանք (պաշտպանությամբ)

1. ՆԱԽԱՊԱՅՄԱՆ. Դասընթացի արդյունավետ յուրացման համար անհրաժեշտ է՝

Դասընթացն առավելագույնս արդյունավետ յուրացնելու համար անհրաժեշտ է, որ ուսանողներն ունենան կրթության կառավարման հիմունքների վերաբերյալ հիմնարար գիտելիքներ, ինչպես նաև տիրապետեն անգլերենին և ռուսերենին, քանի որ անհրաժեշտ հիմնական ու լրացուցիչ մասնագիտական գրականությունը նաև այդ լեզուներով է: Ուսանողները պետք է ունենան նաև ինքնուրույն աշխատանքի կարողություններ ու տիրապետեն անհատական վերլուծական հմտություններին:

2. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Դասընթացը ներառում է կրթության որակի ապահովման ժամանակակից համակարգի հիմնահարցերը: Դասընթացի շրջանակներում անդրադարձ է կատարվում որակի հիմնական հասկացություններին, որակի ներքին և արտաքին ապահովման գործընթացներին, որակի կառավարման արդի մոտեցումներին ու մոդելներին: Հատուկ ուշադրություն է հատկացվում որակի մշակույթի՝ որպես հաստատության կազմակերպական մշակույթի կարևոր բաղադրիչի խնդիրներին: Մանրամասն քննարկվում են որակի ապահովման և Բոլոնիայի մյուս ուղղությունների համակարգային կապը, ՀՀ-ում մասնագիտական կրթության որակի ապահովման շրջանակը, մասնագիտական ուսումնական հաստատությունների և մասնագիտության կրթական ծրագրերի պետական հավատարմագրման նպատակով իրականացվող արտաքին գնահատման գործընթացները, ընթացակարգերը, որակի ապահովման գործընթացների հիմնական պատասխանատուների և շահակիցների դերակատարումները, փորձագետների և մասնագիտական ուսումնական հաստատությունների գործունեության շրջանակը: Դասընթացի շրջանակներում ներկայացվում են նաև «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (ՈԱԱԿ) գործունեությունը, ռազմավարական խնդիրները, առաքելությունը, որակի ապահովման ՈԱԱԿ-ի սկզբունքներն ու շահակիցների հետ համագործակցությունը:

3. Դասընթացի նպատակը

Դասընթացի նպատակն է՝

- ✓ ծանոթացնել ուսանողներին կրթության որակի կառավարման ու գնահատման հիմնական հասկացություններին, կառուցակարգերին և գործիքակազմին,
- ✓ ներկայացնել կրթության որակի ապահովման գործընթացի վերաբերյալ առկա մոտեցումները,
- ✓ աջակցել ուսանողներին՝ տիրապետելու որակի գնահատման մեթոդներին և տեխնիկական գործիքակազմին,
- ✓ զարգացնել կրթության որակի խնդիրների ընկալման և դրանց լուծմանն ուղղված միջոցների հայտնաբերման կարողություններ,
- ✓ ընդլայնել հետագա ուսումնասիրությունների հայեցակարգային շրջանակը:

Դասընթացի անվանում	Կրթության կառավարման տեղեկատվական համակարգեր
Դասընթացի տեսակ	Պարտադիր
Կրթական մակարդակ	Մագիստրատուրա
Ուսուցման ձև	Առկա
Տակնվտես	Կրթության և մասնագիտական մանկավարժության/ ԿՄՄ
Կուրս	1-ին
Կիսամյակ	2-րդ
Մասնագիտություն	Կրթական գիտություններ
Մասնագիտացում	Կրթության գնահատում և թեստավորում
Ամբիոն կամ դասընթացը վարող ստորաբաժանում	Կրթության կառավարման և պլանավորման ամբիոն

Կրեդիտ	3		
Գնահատման բաղադրիչներ	Բաղադրիչ	%	Բաղադրիչի անվանումը
	Բ1	15	Ներկայություն և մասնակցություն
	Բ2	25	Միջանկյալ գրավոր գնահատում
	Բ3	30	Ամփոփիչ գրավոր գնահատում
	Բ4	30	Անհատական պաշտպանություն

1.ՆԱԽԱՊԱՅՄԱՆ. Դասընթացի արդյունավետ յուրացման համար անհրաժեշտ է՝
 Համակարգչային ծրագրերից օգտվելու և տվյալների բազաների հետ աշխատելու պարզ հմտություններ և կարողություններ, քանի որ թե դասընթացի շրջանակներում իրականացվելիք գործնական աշխատանքների թե անհատական աշխատանքների ժամանակ ուսանողները պետք է կարողանան ինքնուրույն աշխատել կրթության կառավարման տեղեկատվական համակարգում և համակարգի հետ փոխկապակցված մի շարք ենթահամակարգերում, ինչպես նաև, մշակել համակարգից ստացված տեղեկատվությունը:
 Ուսանողը պետք է ցուցաբերի ինքնուրույն աշխատելու հմտություններ և կարողություններ:

2.ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ
 «Կրթության կառավարման տեղեկատվական համակարգեր» դասընթացը նախատեսված է կրթության կառավարման ոլորտի մագիստրոսների նախապատրաստման համար՝ հաշվի առնելով նրանց մասնագիտական ուղղվածությունը:
 Ցանկացած ոլորտում, այդ թվում, կրթության ռազմավարության մշակման և արդյունավետ ներդրման համար անհրաժեշտ է ունենալ հավաստի և ամբողջական տեղեկատվություն ոլորտի վերաբերյալ, ինչի ապահովումը գրեթե անհնարին է առանց կառավարման տեղեկատվական համակարգերի համընդհանուր կիրառման:
 Կրթության կառավարման տեղեկատվական համակարգերի գործարկման հիմնական նպատակներն են թե ապակենտրոնացված կառավարման պայմաններում ապահով վերահսկողության իրականացումը վերադաս մարմինների կողմից (ՀՀ ԿԳՄՄ նախարարություն) և թե տեղեկատվության տարատեսակ սպառողների խմբերին համապատասխան տեղեկատվություն տրամադրելը:

3. Դասընթացի նպատակն ու խնդիրները
 Դասընթացի նպատակներն են՝

- Ուսանողների մոտ ձևավորել հստակ պատկերացում կրթության կառավարման տեղեկատվական համակարգերի, դրանց կիրառման և անհրաժեշտության մասին:
- Ուսանողների մոտ զարգացնել և խորացնել տվյալների տարատեսակ բազաների հետ աշխատելու հմտությունները և մաթեմատիկական մոդելները:

Դասընթացի խնդիրներն են՝

- Ուսումնասիրել կրթության կառավարման տեղեկատվական համակարգերի և փոխկապակցված ենթահամակարգերի կառուցվածքը, վերլուծել դրանցում առկա խնդիրները և առաջարկել բարելավման ուղիներ,
- Ուսումնասիրել կրթության վիճակագրության հավաքագրման, ամփոփման և հրապարակման գործընթացները և մշակել ու ներկայացնել առաջարկություններ տարեկան վիճակագրությունում հրապարակվող ցուցանիշների արդիականացման վերաբերյալ:

Դասընթացի անվանում	Գիտական շարադրանքի մեթոդներ
Դասընթացի տեսակ	Պարտադիր
Կրթական մակարդակ	Մագիստրատուրա
Ուսուցման ձև	Առկա
Տակնույտետ	Կրթության և մասնագիտական մանկավարժության/ ԿՄՄ
Կուրս	2-րդ
Կիսամյակ	1-ին
Մասնագիտություն	Կրթական գիտություններ
Մասնագիտացում	Կրթության գնահատում և թեստավորում
Ամբիոն կամ դասընթացը վարող ստորաբաժանում	Կրթության կառավարման և պլանավորման ամբիոն

Կրեդիտ	4		
Գնահատման բաղադրիչներ	Բաղադրիչ	%	Բաղադրիչի անվանումը
	Բ1	10	Ներկայություն
	Բ2	25	Միջանկյալ գնահատում
	Բ3	40	Գործնական առաջադրանքների գնահատում
	Բ4	25	Ամփոփիչ գնահատում

1.ՆԱԽԱՊԱՅՄԱՆ (դասընթացի արդյունավետ յուրացման համար անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ)

Այս դասընթացին մասնակցելու համար սովորողը պետք է ունենա՝

- գաղափար տեքստի կառուցվածքի, իմաստային և կառուցվածքային նվազագույն միավորների, դրանց կապակցման լեզվական միջոցների մասին,
- գաղափար գիտական ոճի առանձնահատկությունների մասին,
- գիտական խոսքի պարզագույն նմուշներ (ռեֆերատ, կուրսային աշխատանք և այլն) գրելու փորձ,
- անգլերեն և ռուսերեն մասնագիտական գրականություն կարդալու և հասկանալու կարողություն
- ինքնուրույն և խմբային աշխատանքներ կատարելու հմտություններ:

2.ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Դասընթացը նպատակ ունի տեսության և առավելապես գործնական աշխատանքի համատեղման միջոցով ուսանողին ծանոթացնելու գիտական խոսքի ժանրային տարբեր դրսևորումներին, գիտական շարադրանքի մեթոդներին ու գիտականությունն ապահովող հիմնական սկզբունքներին, գիտական տեքստի կառուցվածքային և լեզվական առանձնահատկություններին, զարգացնելու սովորողների՝ գիտական խոսք կառուցելու հմտությունները: Դասընթացը շեշտն առավելաբար դնում է անհատական և խմբային գործնական աշխատանքների վրա, որոնք թույլ են տալիս ուսանողին նյութն ընկալել գիտելիքը գործնականում կիրառելու միջոցով: Ուսանողները գիտական շարադրանքի իրենց հմտությունները կզարգացնեն ինչպես տարբեր նմուշների վերլուծության, այնպես էլ ինքնուրույն շարադրանքի միջոցով:

3. Դասընթացի նպատակն ու խնդիրները

Դասընթացի նպատակն է տեսական գիտելիքի և գործնական հմտությունների ձևավորման միջոցով ուսանողներին օգնել հետազոտական աշխատանքի արդյունքները շարադրել գիտական ոճի պահանջների և էթիկայի կանոնների պահպանմամբ:

Դասընթացի խնդիրներն են՝

- ուսանողներին ծանոթացնել գիտական խոսքի տարբեր ժանրերի առանձնահատկություններին,
- ձևավորել հետազոտության նպատակ և խնդիրներ ձևակերպելու հմտություն,
- խորացնել մասնագիտական գրականության վերլուծության հմտությունները,

- ծանոթացնել գիտական ապարատի կառուցման սկզբունքներին (հղումներ, մատենագիտական ցանկեր),
զարգացնել հետազոտության արդյունքները գիտական էթիկայի կանոնների պահպանմամբ շարադրելու հմտություններ:

ԿԱՄԸՆՏՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ

Դասընթացի անվանում	Մանկավարժության հիմունքներ
Դասընթացի տեսակ	Կամրնտրական
Կրթական մակարդակ	Մագիստրատուրա
Ուսուցման ձև	Առկա
Ֆակուլտետ	Կրթության և մասնագիտական մանկավարժության/ ԿՄՄ
Կուրս	1-ին
Կիսամյակ	1-ին
Մասնագիտություն	Կրթական գիտություններ
Մասնագիտացում	Կրթության գնահատում և թեստավորում
Ամբիոն կամ դասընթացը վարող ստորաբաժանում	Կրթության կառավարման և պլանավորման ամբիոն

Կրեդիտ	3		
Գնահատման բաղադրիչներ	Բաղադրիչ	%	Բաղադրիչի անվանումը
	Բ1	10	Ներկայություն և մասնակցություն
	Բ2	30	Միջանկյալ գրավոր գնահատում
	Բ3	30	Ամփոփիչ բանավոր գնահատում
	Բ4	30	Անհատական աշխատանք (պաշտպանությամբ)

1. ՆԱԽԱՊԱՅՄԱՆ. Դասընթացի արդյունավետ յուրացման համար անհրաժեշտ է՝
 Դասընթացն առավելագույն արդյունավետությամբ յուրացնելու համար անհրաժեշտ է, որ ուսանողներն ունենան կրթության ոլորտի վերաբերյալ նվազագույն գիտելիքներ, տիրապետեն անգլերենին և ռուսերենին, քանի որ արդի մասնագիտական գրականությունը նաև այդ լեզուներով է: Ուսանողները պետք է ունենան նաև ինքնուրույն աշխատանքի կարողություններ ու տիրապետեն անհատական վերլուծական հմտություններին:

2. ԴԱՄԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ
 Դասընթացի շրջանակներում անդրադարձ է կատարվում մանկավարժության արդի հիմնահարցերին ու կրթության զարգացման հեռանկարներին: Դասընթացի ընթացքում ներկայացվում են մանկավարժության հիմնական հասկացությունները, մանկավարժության զարգացման փուլերն ու գիտամանկավարժական հետազոտության մեթոդները: Կարևորելով կրթության գնահատման և թեստավորման գործընթացներում մանկավարժության հիմունքների իմացությունը՝ դասընթացի շրջանակներում մանրամասն քննարկվում են կրթության բովանդակության գիտական սկզբունքներն ու բաղադրիչները, ուսուցման և դաստիարակության գործառույթները, նպատակները, կազմակերպման ձևերը, մեթոդներն ու միջոցները, օրինաչափություններն ու սկզբունքները: Դասընթացը բովանդակում է նաև սովորողների ուսումնական գործունեության վերահսկողության մեթոդներն ու գիտելիքների գնահատման ժամանակակից ձևերն ու մոտեցումները: Դասընթացի շրջանակներում ներկայացվում են նաև ուսուցչի մասնագիտական գործառույթներն ու նրան ներկայացվող ժամանակակից պահանջները, ուսուցիչների մասնագիտական պատրաստման գործընթացում մանկավարժության մասնագիտության կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների դերակատարությունը, մանկավարժական կրթության հայեցակարգային շրջանակն ու կազմակերպման մոդելները, ինչպես նաև զարգացման միտումներն ու արդիականացման սկզբունքները: Հաշվի առնելով նաև մանկավարժության համեմատաբար նոր ուղղության՝ էլեկտրոնային մանկավարժության զարգացման հեռանկարները՝ անդրադարձ է կատարվում նաև կրթության տեղեկատվայնացմանն ու այդ գործընթացում մանկավարժների մասնագիտական պատրաստման և զարգացման հիմնահարցերին:

2.1 Դասընթացի նպատակը

Դասընթացի նպատակն է՝

- ✓ ներկայացնել մանկավարժության հիմունքներն ու մանկավարժական հիմնական հասկացությունները,
- ✓ ներկայացնել դաստիարակության և ուսուցման սկզբունքներն ու օրինաչափությունները, մեթոդները և միջոցները,
- ✓ աջակցել ուսանողներին՝ տիրապետելու մանկավարժական գործընթացի արդյունավետության գնահատման մեթոդներին,
- ✓ զարգացնել մանկավարժության արդի խնդիրների ընկալման և դրանց լուծմանն ուղղված եղանակների հայտնաբերման գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ,
- ✓ ընդլայնել հետագա ուսումնասիրությունների հայեցակարգային շրջանակը: